ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/90

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Մոսէսքո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Ա. Ասատրյանի,
«Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Լ. Պողոսյանի, Ա. Հակոբյանի,
«Մոսէսքո» ՍՊԸ-ի տնօրեն՝ Կ. Գրիգորյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, ավիավառելանյութի, յուղերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 27.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. դադարեցնել 15.09.2021թ.-ի «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատման հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ «Մոսէսքո» ՍՊԸ-ին որպես ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

2. պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատման հանձնաժողովին 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.09.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 27.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/15662-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում արձանագրված թերությունը վերացնելու համար:

Ընկերությունը 27.09.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

Բողոքներ քննող անձի կողմից 28.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/90 համարի ծածկագիրը:

06.10.2021թ.-ին՝ ներկայացված բանավոր միջնորդության հիման վրա «Մոսէսքո» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

06.10.2021թ.-ին և 15.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.10.2021թ.-ին և որոշման հրապարակման օր է նշանակվել 15.10.2021թ.-ին:

2. «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ն 27.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի սեպտեմբերի 13-ին կայացել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «ավիավառելանյութի, շարժիչի յուղերի» գնման

գործընթացի ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը:

Վերոհիշյալ գնման գործընթացի 2-րդ չափաբաժնի համար հայտ է ներկայացրել երկու ընկերություն, մեր ընկերությունը «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ն և «Մոսէքսո» ՍՊԸ-ն ըստ 15.09.2021թ.-ի ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատման հանձնաժողովի N 4 արձանագրության 3.1 կետի:

Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի պայմանագիր կնքելու մասին թիվ 4 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և նվազագույն գին չափանիշի կիրառմամբ, ընտրված մասնակից է համարվել «Մոսէքսո» ՍՊԸ-ն:

Մենք, ուսումնասիրելով փաստաթղթերը պարզել ենք, որ «Մոսէքսո» ՍՊԸ-ն առաջարկել է հրավերում նշված LISO 84035624-081-2012 ստանդարտից տարբերվող ստանդարտով ապրանք, որի համար նշել է ՏՊ 19.20.29-001-13488701-2018 (Հավելված 1.1): Համաձայն հրավերի, եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳOUS, ՏՊ, OUS, USO և այլն) տարբերվող ստանդարտով ապրանք (2-րդ չափաբաժնի համար), ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը: «Պրեմիում Մոթորս» ՍՊ ընկերությունը դիմել էր ՀՀ ՊՆ ԳԳ վարչության ԳԿ 2-րդ բաժին տվյալ ՏՊ-ի կրկնօրինակը ստանալու համար: Կրկնօրինակը ստանալուն պես դիմել ենք մեր գործընկերներին համապատասխան ճշտումները կատարելու նպատակով:

Արդյունքում պարզել ենք

- ՏՊ 19.20.29-001-13488701-2018 գրանցված չէ Ստանդարտիզացման ռուսական ինստիտուտի (Федеральное государственное бюджетное учреждение «Российский институт стандартизации» (ФГБУ «РСТ») կայքում (http://prodrf.gostinfo.ru/) կամ որևէ այլ պաշտոնական ռեեստրում: «Մոսէքսո» ՍՊԸ կողմից ներկայացված Տեխնիկական պայմանը պարզապես «Սոյուզավիախիմ» ՍՊԸ ներքին փաստաթուղթ է, քանի դեռ ռեեստր վարող մարմինը չի ստուգել և հաստատել, որ տվյալ արտադրանք արտադրող կազմակերպությունը ունի նյութատեխնիկական համապատասխան ենթակառուցվածքներ տվյալ ՏՊ-ում ներկայացված չափանիշներին համապատասխան արտադրանք թողարկելու համար: Որպես համեմատություն ՀՀ ՊՆ պահանջած USO 84035624-081-2012 գրանցված է http://prodrf.gostinfo.ru/clp viewlist?dlgID=dialogNormDocs կայքում:

- ՏՊ-ի վրա առկա է НИИ Стандартизации оборонной продукции и технологий-ի (19.12.2018թ. ներառվել է Ստանդարտիզացման ռուսական ինստիտուտի (Федеральное

государственное бюджетное учреждение «Российский институт стандартизации» (ФГБУ «РСТ») կազմում https://www.gostmfo.ru/InformationOfStandardization/Detai!s/168Q) գրանցման մասին կնիքով նշում, որը ստացված է ՏՊ ստեղծման օրվանից ընդամենը մի քանի օրվա տարբերությամբ (վավելված 3), իսկ մի քանի օրում ռազմական նշանակության արտադրանքի ՏՊ-ի թույլտվության ստանալը իրատեսական չէ: Մեր գործընկերը դիմել է Ստանդարտիզացման ռուսական ինստիտուտին (Федеральное государственное бюджетное учреждение «Российский институт стандартизации» (ФГБУ «РСТ»)՝ նշված գրանցման համարը ստուգելու համար, և ստացել է պատասխան իրենց տվյալների բազայում փաստաթղթի գրանցման բացակայության մասին:

- *«Սոյուզավիախիմ» ՍՊԸ մոտ գրանցված է նմանատիպ ՏՊ 1 տիպի տարբերությամբ (հավելված 2) ինչպես նաև չեն համապատասխանում փաստաթղթերի ամսաթվերը, ինչը խոսում է այն մասին, որ դա տպագրական սխալ չէ:*
- *«Սոյուզավիախիմ» ՍՊԸ-ն հանդիսանում է միկրո կազմակերպություն 15 հոգուց ոչ ավել աշխատակիցների հաստիքացուցակով:*

Ամփոփելով վերոգրյալը և հիմնվելով բոլոր բերված փաստարկների և փաստաթղթի անհամապատասխանության ակնհայտ նշանների առկայության վրա, հանձնաժողովը, չունենալով նշված տեղեկատվությունը, կայացրել է սխալ որոշում ընտրված մասնակից ճանաչելով «Մոսէսքո» ՍՊԸ-ին:

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «ավիավառելանյութի, շարժիչի յուղերի» գնման գործընթացի ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի Armeps համակարգով ներկայացրված «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ հայտը ամբողջությամբ;

2. ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատման հանձնաժողովի N 4 արձանագրության:

3. ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

4. ՀՀ ՊՆ կողմից տրամադրված ՏՊ-ի կրկնօրինակը:

5. Armeps համակարգով ներկայացրված «Մոսէսքո» ՍՊԸ հայտը ամբողջությամբ:

6. «Սոյուզավիախիմ» ՍՊԸ մոտ գրանցված է նմանատիպ ՏՊ-ի համապատասխանության հավաստագիրը:

7. Ստանդարտիզացման ռուսական ինստիտուտից (Федеральное государственное бюджетное учреждение «Российский институт стандартизации» (ФГБУ «РСТ») ստացված պատասխան:

3. Համաձայն գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի.

1. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

4. ՀՀ գնումների մասին օրենքի 34-րդ հողվածի 5-րդ մասի.

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ գնումների մասին օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասով, 46-րդ հոդվածի 1-ին մասի, 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 50-րդ հոդվածի և 51-րդ հոդվածի դրույթներով՝ «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. դադարեցնել 15.09.2021թ.-ի «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատման հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ «Մոսէքո» ՍՊԸ -ին, որպես ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

2. պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատման հանձնաժողովին 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ին:

Ընկերությունը, 12.10.2021թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ, հավելել է հետևյալը.

«Ի լրումն «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ի կողմից 27.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով ԳԲՔԱ-ԼՕ-2021/90 բողոքի (Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, Ընթացակարգի ծածկագիրը «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2») սույն գրությամբ հայտնում ենք մեր պաշտոնական դիրքորոշումը և խնդրում ենք վերը նշված բողոքի քննության ընթացքում հաշվի առնել նաև հետևյալ փաստարկները.

• Սույն թվականի մայիսի 24-ին տեղի է ունեցել Պաշտպանության նախարարության կողմից հայտարարած «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով գնման ընթացակարգը, որի գնման առարկան, ինչպես և «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով մրցույթի դեպքում, եղել է նույն տեխնիկական պարամետրերով պահանջվող 15w-40 շարժիչի յուղը («ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» մրցույթի հրավերը կցված է): «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» մրցույթին «Մոսէքսը» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացրած Հավելված 1.1-ով (կցված է) ներկայացրել է հրավերով սահմանված ստանդարտից տարբերվող ստանդարտ ՏՊ 19.20.29-001-13488701-2018: Ըստ հրավերի պահանջի, «Մոսէքսը» ՍՊԸ-ն 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է ՏՊ 19.20.29-001-13488701-2018-ի կրկնօրինակը: Գնահատող հանձաժողովը, համադրելով «Մոսէքսը» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ՏՊ-ի կրկնօրինակը իր իսկ կողմից ներկայացրած Հավելված 1.1-ի և հրավերով սահմանված 15w-40 յուղի տեխնիկական պարամետրերի հետ, արձանագրել է անհամապատասխանություններ: Մասնավորապես Հավելված 1.1-ով ներկայացվել է «-կինեմատիկ մածուցիկությունը 100°C դեպքում 15,3-16,33մմ2/վ», «-սուլֆատային մոխրայնությունը ոչ ավել 1,5%», սակայն ՏՊ կրկնօրինակով ներկայացվել է «-կինեմատիկ մածուցիկությունը 100°C դեպքում 14,5-16,0մմ2/վ», «-սուլֆատային մոխրայնությունը ոչ ավել 1,8%»: Բացի այդ ՏՊ-ի կրկնօրինակով չի ներկայացվել «-խտությունը ոչ ավել 91 Օկգ/մ3» (ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7 ծածկագրով գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն): Առկա անհամապատասխանությունների հիման վրա «Մոսէքսը» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է և մրցույթը համարվել է չկայացած (ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/52 որոշում 04.08.2021թ., ՀՀ ՊՆ պաշտոնական դիրքորոշումը ՀՀ ՊՆ-2ԲՄԱՊՁԲ-21-7/2 ծածկագրով մրցույթի բողոքը քննող

անձ Լ. Օհանյանին): Այսինքն «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքը իր տեխնիկական պարամետրերով չի համապատասխանել ՊՆ-ի կողմից պահանջվող ապրանքի տեխնիկական պարամետրերին:

Սույն թվականի արդեն սեպտեմբերի 13-ին կայացած Պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով մրցույթի շրջանակներում «Մոսէսքո» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված Հավելված 1.1-ում կրկին ներկայացրել է ՊՆ-ի պահանջած ստանդարտից տարբերվող ստանդարտ ՏՊ 19.20.29-001-13488701-2018, այնուհետն 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է նշված ստանդարտի կրկնօրինակը: Այս անգամ գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով ներկայացրած ՏՊ-ի կրկնօրինակը արձանագրել է, որ այն համապատասխանում է մրցույթի պահանջներին:

Կարող ենք արձանագրել, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն երկու անգամ մասնակցելով նույն գնման առարկայի մրցույթներին, որոնց տեխնիկական պահանջները ամբողջովին նույնն են, ներկայացնում է ամբողջովին նույն ՏՊ-ն, սակայն առաջին անգամ ներկայացված ՏՊ-ի կրկնօրինակում արձանագրվում է տեխնիկական պարամետրերի անհամապատասխանություն պահանջվող ապրանքի տեխնիկական պարամետրերին, իսկ երկրորդ անգամ ՆՈՒՅՆ ՏՊ-ի տեխնիկական պարամետրերը ամբողջովին համապատասխանում են:

Հարկ է նշել, որ նույն ՏՊ-ն չի կարող ունենալ տարբեր տեխնիկական պարամետրեր: Եթե նույնիսկ արտադրողը կարող է արտադրել մրցույթի պահանջով սահմանված տեխնիկական պարամետրերին համապատասխան ապրանք, ապա դա պետք է հաստատված լինի այլ ՏՊ-ով, այսինք ՏՊ-ի անվան մեջ գոնե մեկ նիշ պետք է տարբերվի նախորդից:

- *ՌԴ-ում ՏՊ-ների և այլ ստանդարտների գրանցումը իրականացվում է Տեխնիկական վերահսկման և չափագրության դաշնային գործակալության Ռուստանդարտի կողմից: 2018թ նոյեմբերի 27-ին Տեխնիկական վերահսկման և չափագրության դաշնային գործակալության Ռուստանդարտի N 1033-ст հրամանով հաստատվել է ՌԴ ազգային ստանդարտ ГОСТ Р 1.18-2018 "Стандартизация в Российской Федерации. Реестр технических условий. Правила формирования, ведения и получения информации", որով սահմանվում է ստանդարտների միասնական ռեեստրի ստեղծումն ու դրանց վերաբերյալ տեղեկատվություն ստանալու ազատությունն ու հնարավորությունները: Ըստ ГОСТ Р 1.18-2018 ստանդարտի բոլոր գրանցված ՏՊ-ները պետք է հասանելի լինեն էլեկտրոնային ռեստրում: Սակայն «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ՏՊ 19.20.29-001-13488701-*

2018 գրանցված չէ Ստանդարտիզացման ռուսական ինստիտուտի (Федеральное государственное бюджетное учреждение «Российский институт стандартизации» (ФГБУ «РСГ») կայքում (http://prodrf.gostinfo.ru/) կամ որևէ այլ պաշտոնական ռեեստրում: «Մոսէսքո» ՍՊԸ կողմից ներկայացված Տեխնիկական պայմանը պարզապես «Սոյուզավիախիմ» ՍՊԸ ներքին փաստաթուղթ է, քանի դեռ ռեեստր վարող մարմինը չի ստուգել և հաստատել, որ տվյալ արտադրանք արտադրող կազմակերպությունը ունի նյութատեխնիկական համապատասխան ենթակառուցվածքներ տվյալ ՏՊ-ում ներկայացված չափանիշներին համապատասխան արտադրանք թողարկելու համար: Որպես համեմատություն՝ ՀՀ ՊՆ ՀՀ ՊՆ-ՃԲՄԱՊՁԲ-21-7/2 ծածկագրով մրցույթով պահանջած USO 84035624-081-2012 գրանցված է http://prodrf.gostinfo.ru/clp_viewlist?dlgID-=dialogl\lormDocs կայքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է 1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում համարժեք հատուցմամբ.

2) Գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) Գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) Պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլանում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) Ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասին համաձայն ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման

առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 28.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15774-2021 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ի կողմից 27.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 05.10.2021թ.-ին թիվ ՊՆ//5346-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր 28.09.21թ. թիվ /ԲՔՄ-ԼՕ/2/15774-2021 գրությամբ ներկայացված «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ի բողոքը, հայտնում եմ հետևյալը.

Շարժիչի յուղի ձեռքբերման նպատակով ՀՀ ՊՆ կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21 -7/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Պրեմիում Մոթորս» և «Մոսէքսը» ՍՊ ընկերությունները: Վերջիններիս հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող և հաշվի առնելով, որ «Մոսէքսը» ՍՊԸ-ն ներկայացրել է ավելի ցածր գնային առաջարկ, ուստի վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

Սակայն «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ն 22.09.2021թ. ՀՀ պաշտպանության նախարարություն է ներկայացրել գրություն (կցվում է), որով «Մոսէքսը» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը որակել է որպես կեղծիք և խնդրել է լրացուցիչ ուսումնասիրել դրանք համապատասխան որոշում կայացնելու համար:

Հիմք ընդունելով վերը նշված գրությունը, «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կատարվել է «Մոսէքսը» ՍՊ

ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի լրացուցիչ ուսումնասիրություն և պարզվել հետևյալը.

2021թ. կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում նախատեսված է եղել շարժիչի յուղեր /15\ձ/40/-ի ձեռքբերում, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մոսէսքո» ՍՊ ընկերությունը: Վերջինս հայտով ներկայացրել է «ՏՊ 19.20.29-001-13488701-2018» ստանդարտը և հավաստել, որ իր կողմից մատակարարման ենթակա յուղը համապատասխանում է նշված ստանդարտին: Սակայն գնահատող հանձնաժողովը համեմատելով ներկայացված փաստաթղթում առկա տեղեկատվությունը հրավերի պահանջների հետ, որպես հրավերով նախատեսված պարամետրերին չհամապատասխանող առաջարկ, հայտը մերժել է: Հետագայում իրականացվել է միևնույն գնման առարկայի գնման գործընթաց՝ «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով, որի արդյունքում «Մոսէսքո» ՍՊ ընկերության կողմից կրկին ներկայացվել է «ՏՊ 19.20.29-001-13488701-2018» ստանդարտը, որում առկա չափորոշիչներն համապատասխանել են հրավերով սահմանված չափորոշիչներին, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է բավարար և վերջինս ճանաչվել է հաղթող մասնակից:

Հաշվի առնելով, «Պրեմիում Մոթորս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը, կրկին անգամ ուսումնասիրելով միևնույն գնման առարկայի համար իրականացված «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով և «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրով ընթացակարգերի շրջանակներում «Մոսէսքո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված «ՏՊ 19.20.29-001-13488701-2018» ստանդարտը, պարզվել է, որ միևնույն կազմակերպության կողմից տրամադրված տվյալ փաստաթղթերում, որոնք նույնականացվել են ըստ տիտղոսաթերթերի, տրամադրման ամսաթվերի, տրամադրող մարմնի, համարի, դրանց հաստատողի ստորագրությունների, առկա են որոշակի տարբերություններ, մասնավորապես դրանց 1.1 կետի աղյուսակի մեջ՝ 1-ին, 3-րդ, 4-րդ և 13-րդ կետերում նշված են տարբեր պարամետրեր:

Նշված հանգամանքներով պայմանավորված, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 67-րդ կետը գնահատող հանձնաժողովը «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցրել է և դիմել ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությանը՝ խնդրելով ուսումնասիրել «Պրեմիում Մոթորս» ՍՊ ընկերության կողմից գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև «Մոսէսքո» ՍՊ ընկերության կողմից տարբեր գնման ընթացակարգերին ներկայացված

փաստաթղթերը և հայտնել, թե արդյոք դրանք կարող են հանդիսանալ կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ): Այս կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության դիրքորոշումը դեռևս չի ստացվել:

Ինչ վերաբերվում է բողոքում նշված այն մտքին, որ գնահատող հանձնաժողովը կայացրել է սխալ որոշում, ապա հայտնում եմ, որ հանձնաժողովը որևէ պարտավորություն չունի ստուգելու մասնակիցների կողմից հայտերով ներկայացվող տեղեկատվության իսկությունը ստուգելու և «Մոսէքո» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից է ճանաչել հրավերով պահանջվող փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում: Հետևաբար տվյալ պարագայում հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:»:

Պատվիրատուն, 11.10.2021թ.-ին ներկայացված լարցմամբ, հայտնել է հետևյալը.

«Ի լրումն ՀՀ պաշտպանության նախարարության 05.10.21թ. թիվ ՊՆ//5346-2021 գրության, հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունը 08.10.21թ. թիվ 518/6999 գրությամբ (կցվում է) տեղեկացրել է, որ «Մոսէքո» և «Սոյուզավիոխիմ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված փաստաթղթերի կեղծ լինելու վերաբերյալ այս պահի դրությամբ տեղեկություններ չեն ստացվել, ուստի հիմնավոր կասկածներ չկան, որ «Մոսէքո» ՍՊԸ-ն իր ներկայացրած փաստաթղթերում կատարել է կեղծիք:

Միաժամանակ հայտնում եմ, որ Զինված ուժերի ավտոմոբիլային տեխնիկաների շարժիչային յուղերի 2021թ. համար նախատեսված ձեռքբերումը ՀՀ ՊՆ կողմից դեռևս չի իրականացվել՝ մրցույթների չկայանալու պատճառով: Դրանով պայմանավորված Զինված ուժերում ավտոմոբիլային տեխնիկաների առկա շարժիչային յուղերի քանակությունը ներկայումս սակավ է և չի ապահովելու Զինված ուժերի տեխնիկաների հետագա սպասարկման համար սահմանված չափանիշները:

Շարժիչային յուղերի հետագա ձեռքբերումը չիրականացնելու դեպքում, մինչև ս.թ. դեկտեմբեր ամիսը Զինված ուժերում առկա տեխնիկաների 20-ից 30%-ը (1500-ից 1800 միավոր) հնարավոր չի լինելու շահագործել:

Նշվածով պայմանավորված հայտնում եմ, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետներում շարունակել «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով գնման գործընթացը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հնարավորին սեղմ ժամկետում կամ ընդունել որոշում «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ կամ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը՝ հանել նշված բողոքի հետ կապված գնման գործընթացի կասեցումը:»:

3. <u>Երրորդ անձ՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Մոսէսքո» ՍՊԸ-ն 06.10.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին և ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավիավառելանյութի, յուղերի ձեռքբերման նպատակով 25.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի պահանջներին, բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/90 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավիավառելանյութի, յուղերի ձեռքբերման նպատակով 25.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) գնման առարկա է հանդիսանում «շարժիչի յուղեր/15W40/» ապրանքատեսակը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 09211110/11:

iii. Հավելված 1-ով 2-րդ չափաբաժնի մասով սահմանվել է, որ շարժիչի յուղերը /15W40/ պետք է ունենա USO 84035624-081-2012 միջազգ. ստանդ. SAE-15W40 API-SL/CI-4 կամ համարժեք:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ն և «Մոսէսքո» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.09.2021թ.-ի թիվ 4 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 2-րդ չափաբաժնով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում ներկայացվել է այլ ՏՊ-ով տեխնիկական բնութագիր ունեցող ապրանք, մասնավորապես.

«ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժեով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ «USO 84035624-081-2012 Միջազգ. ստանդ. SAE-I5W40 API-SUCI-4 կամ համարժեք» տեղեկատվությունը, իսկ մասնակիցը ներկայացրել է «ՏՊ 19.20.29-001-13488701-2018 SAE-15W40 API-SL/CI-4» տեղեկատվությունը, սակայն չի ներկայացրել նշված ստանդարտի կրկնօրինակը (պատճենը):

«ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳOUS, ՏՊ, OUS, USO և այլն) տարբերվող (համարժեք) ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, ուստի անհրաժեշտ էր ներկայացնել «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չափանիշներից չտարբերվող տեղեկատվություն (բացառելով, կամ համարժեք բառերը), կամ անհրաժեշտ էր ներկայացնել առաջարկվող ստանդարտի (ՏՊ) կրկնօրինակը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 15.09.2021թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Arrneps (vwvw.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Նույն արձանագրության 2.4-րդ կետի համաձայն՝ 17.09.2021թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, արձանագրելով որ սույն արձանագրության 2.3 կետում նշված՝ շտկման ենթակա անհամապատասխանությունները մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է՝ ներկայացրել է «ՏՊ 19.20.29-001-13488701-2018 SAE-15W40 API-SL/CI-4» ստանդարտի կրկնօրինակը, որը գնահատվել է համապատասխան ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով սահմանված ապրանքի տեխնիկական

բնութագրերին, որոշել է Մասնակցի հայտը գնահատել բավարար (համապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

vii. ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության 08.10.2021թ.-ին թիվ 518/699 գրության համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊ ընկերությունը 15W40 շարժիչի յուղի ձեռքբերման նպատակով մասնակցել է «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» և «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրերով գնման ընթացակարգերին և հայտով ներկայացրել է «ՏՊ 19.20.29-001-13488701-2018» ստանդարտը: «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/7» ծածկագրերով բաց մրցույթի շրջանակում «Մոսէսքո» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է «Սոյուզավիոխիմ» ՍՊ ընկերության «ՏՊ 19.20.29-001-13488701-2018» ստանդարտը, որի տեխնիկական բնութագրի 1-ին, 3-րդ, 4-րդ և 13-րդ կետերում նշված տվյալները տարբերվում են «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» մ՛րցույթի ժամանակ ներկայացված տվյալներից: Ըստ «Մոսէսքո» ՍՊ ընկերության տնօրեն Կարեն Գրիգորյանի բանավոր հայտարարության վերոնշյալ անճշտությունը առաջացել է «Սոյուզավիոխիմ» ՍՊ ընկերության աշխատակցի կողմից տեխնիկական բացթողման հետևանքով, որը մրցույթի ժամանակահատվածում «Սոյուզավիոխիմ» ՍՊ ընկերության կողմից ուղղվել է և ներկայացվել է գնման ընթացակարգին: «Մոսէսքո» և «Սոյուզավիոխիմ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերի կեղծ լինելու վերաբերյալ այս պահի դրությամբ տեղեկություններ չեն ստացվել, ուստի հիմնավոր կասկածներ չկան, որ «Մոսէսքո» ՍՊ ընկերությունը իր ներկայացված փաստաթղթերում կատարել է կեղծիք: Այդուհանդերձ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունում շարունակվում են օպերատիվ հետախուզական միջոցոցառումները՝ գրությամբ նշված փաստաթղթերի կեղծ լինելու հանգամանքները պարզելու ուղղությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ի կողմից 27.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի

պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավիավառելանյութի, յուղերի ձեռքբերման նպատակով 25.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 2-րդ չափաբաժնի մասով սահմանվել է, որ շարժիչի յուղերը /15W40/ պետք է ունենա USO 84035624-081-2012 միջազգ. ստանդ. SAE-15W40 API-SL/CI-4 կամ համարժեք: Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ն և «Մոսէսքո» ՍՊԸ-ն: Հանձնաժողովի 15.09.2021թ.-ի թիվ 4 արձանագրության 2.3-րդ կետով արձանագրվել է, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում ներկայացվել է այլ ՏՊ-ով տեխնիկական բնութագիր ունեցող ապրանք. Մասնավորապես՝ «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժեով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ «USO 84035624-081-2012 Միջազգ. ստանդ. SAE-I5W40 API-SUCI-4 կամ համարժեք» տեղեկատվությունը, իսկ մասնակիցը ներկայացրել է «ՏՊ 19.20.29-001-13488701-2018 SAE-15W40 API-SL/CI-4» տեղեկատվությունը, սակայն չի ներկայացրել նշված ստանդարտի կրկնօրինակը (պատճենը): «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳՕՍՏ, ՏՊ, ՕՍՏ, USO և այլն) տարբերվող (համարժեք) ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, ուստի անհրաժեշտ էր ներկայացնել «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չափանիշներից չտարբերվող տեղեկատվություն (բացառելով, կամ համարժեք բառերը), կամ անհրաժեշտ էր ներկայացնել առաջարկվող ստանդարտի (ՏՊ) կրկնօրինակը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ

կետը՝ 15.09.2021թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (vwvw.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության 2.4-րդ կետի համաձայն՝ 17.09.2021թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, արձանագրելով, որ սույն արձանագրության 2.3 կետում նշված շտկման ենթակա անհամապատասխանությունները մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է, այն է՝ ներկայացրել է «ՏՊ 19.20.29-001-13488701-2018 SAE-15W40 API-SL/CI-4» ստանդարտի կրկնօրինակը, որը գնահատվել է համապատասխան ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերին, որոշել է Մասնակցի հայտը գնահատել բավարար (համապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, բողոքով ներկայացված իրավական ու փաստական հանգամանքները, ապացույցները, «Սոյուզավիոխիմ» ՍՊԸ-ի «ՏՊ 19.20.29-001-13488701-2018» ստանդարտը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով

բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթի կեղծ լինելու վերաբերյալ վերաբերելի բավարար ապացույցներ: Այն, որ «Սոյուզավիոխիմ» ՍՊԸ-ի «ՏՊ 19.20.29-001-13488701-2018» ստանդարտը կեղծ է: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Հատկանշական է, որ http://prodrf.gostinfo.ru կայքի ուսումնասիրության արդյունքում՝ Բողոքներ քննող անձին հասանելի է եղել «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ՏՊ 19.20.29-001-13488701-2018 ստանդարտը (http://prodrf.gostinfo.ru/searchsubsystem հղմամբ «ԿԼՊ» դաշտում զետեղելով ստանդարտի գրանցման թիվ 200.058340 համարը):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավիավառելանյութի, յուղերի ձեռքբերման նպատակով 25.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշում կայացնելով, գործել է իրավաչափ, քանի որ Մասնակցի կողմից թույլ չի տրվել Կարգի 42-րդ և Հրավերի 8.10-րդ կետերով սահմանված դրույթների խախտում, որպիսի պայմաններում

Ընկերության կողմից ներկայացված՝ «ՀՀ ԱՄԱՔ-ԲՄԱՇՁԲ-21/03» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 15.09.2021թ.-ին թիվ 4 արձանագրությամբ «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելուն ու մերժելուն, ինչպես նաև «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու մասին ներկայացված պահանջներն անհիմն են և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ի կողմից 27.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/90 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**